

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՎԵՐԴՅԱՆ ՌԱԴԻԿ ԱՐՏՅՈՄԻ

**ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԾԱԽՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն
և կառավարում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների
ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀԱՅԿ ԼԼՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԱՐՄԱՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ագրարային
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հուլիսի 4-ին ժամը 15:00-ին
Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015
մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունիսի 3-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝



Ա. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսակարգի պայմաններում Հայաստանի տնտեսության զարգացման հիմնական խնդիրը տնտեսական կայուն և ինտենսիվ աճի ապահովումն է, որում կարևոր դերակատարում ունի տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի բարելավումը և գործարքային ծախքերի կրճատումը:

Իրական տնտեսական գործընթացների բարդությունը, դրանց հակասականությունը և ոչ միանշանակ ընկալումը անցումային տնտեսությունում չափազանց դժվարացնում են տնտեսական քաղաքականության ուղղությունների ընտրությունը: Ժամանակակից տնտեսությունն իրենից ներկայացնում է որոշ դեպքերում միմյանց հակասող հարաբերությունների որոշակի խմբերի համադրություն. շուկայական տնտեսական հարաբերություններ՝ տնտեսության նպատակաուղղված կարգավորում, ձեռնարկատիրության խթանում, սոցիալական քաղաքականության իրականացման անհրաժեշտություն, տնտեսության գլոբալացում, ազգային տնտեսության մրցունակության ապահովում և այլն: Առկա են նաև սուր հակասություններ շուկայական վերափոխումների և ձևավորված ազգային ավանդույթների միջև:

Հայաստանի տնտեսության զարգացման արդի փուլը բնորոշվում է շուկայական հարաբերությունների ինստիտուցիոնալ հիմքերի ոչ ամբողջական ավարտվածությամբ, իսկ տնտեսվարող կազմակերպությունները գործում են պայմանագրային հարաբերությունների ինստիտուտների ոչ լիարժեք զարգացվածության պայմաններում: Տնտեսական հարաբերությունների զարգացումը առաջ է բերել նաև արտադրական և իրացման ռազմավարությունների վերանայման անհրաժեշտություն, ինչն էլ, իր հերթին, պահանջում է սեփականության իրավունքների պատշաճ պաշտպանության ապահովում՝ նոր ռազմավարություններին համահունչ կերպով:

Հայաստանի տնտեսության շուրջ քսանհինգամյա ձևափոխումները ցույց են տալիս, որ շուկայական մեխանիզմների ցածր արդյունավետության պատճառներից մեկը հանդիսանում է ինստիտուցիոնալ միջավայրի թերզարգացվածությունը: Գործարքային ծախքերի հաշվի առնելը և վերջիններիս ազդեցության գնահատումը վերարտադրության գործընթացի վրա թելադրված է տնտեսական հարաբերությունների բարդացումից, ինչպես նաև տնտեսական զարգացման տեխնոլոգիական գործոնների հետ մեկտեղ նաև ինստիտուցիոնալ գործոնների նշանակության բարձրացումից: Կապված այն բանի հետ, թե գործարքային ծախքերն ինչպիսի մասնաբաժին ունեն շուկա հանվող ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի կազմում, վերջին հաշվով կախված է ինչպես առանձին տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ ամբողջ ազգային տնտեսության արդյունավետությունը և մրցունակությունը:

Հայաստանի տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անկատարությունն արտացոլող հիմնական առանձնահատկություններից կարելի է նշել սեփականության իրավունքի մասնակիացման և պաշտպանության հետ կապված բարձր ծախքերը, զգալի վարչական արգելքները և խոչընդոտները, օրենսդրական դաշտի հակասականությունը, պետական և կորպորատիվ կառավարման որակի ցածր մակարդակը, մրցակցության ոչ հավասար պայմանները, բարձր հարկային բեռը, սուվերային տնտեսության մեծ չափերը, ընդհանուր տնտեսական անորոշությունները: Բոլոր նշված գործոնները զգալիորեն մեծացնում են ձեռնարկատիրական ռիսկերը, նվազեցնում գործարար ակտիվությունը և Հայաստանի տնտեսության ներդրումային գրավչությունը: Այս առումով, հարկավոր է ակտիվացնել ինստիտուցիոնալ միջավայրի կատարելագործման ուղղությամբ պետական քաղաքականությունը և մասնավորապես, գործարքային ծախքերի նվազեցման կոնկրետ ուղիների ու մեխանիզմների ներդրումը:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում գործարքային ծախքերի գնահատումն է և վերջիններս նվազեցման մեխանիզմների և ուղիների մշակումը, որին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գործարքային ծախքերի հասկացությունը և էությունը, բացահայտել վերջիններիս դերը տնտեսության մեջ,
- հետազոտել գործարքային ծախքերի տեսամեթոդական հիմքերը,
- ուսումնասիրել գործարքային ծախքերի տնտեսագիտական դասակարգման հիմնական մոտեցումները,
- վերլուծել տնտեսության մեջ գործարքային ծախքերի գնահատման հիմնական մոտեցումները և դրանց առանձնահատկությունները,
- հետազոտել գործարքային ծախքերի գնահատման համաշխարհային փորձը և վերլուծել դրա հիմնական առանձնահատկությունները,
- ուսումնասիրել և վերլուծել գործարքային ծախքերի կառավարման հայեցակարգը ծախսերի տնտեսագիտական դասակարգման համատեքստում,
- ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքի վերաբերյալ հիմնական մոտեցումները,
- գնահատել գործարքային ծախքերի մակարդակը ՀՀ տնտեսության մեջ, ինչպես նաև գործարքային հատվածի և դրա առանձին ճյուղերի հարաբերական արդյունավետությունը,
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում գործարքային ծախքերի նվազեցման հիմնախնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տնտեսությունն է, իսկ առարկան՝ տնտեսության մեջ առկա գործարքային ծախքերը և դրանց նվազեցման ուղիները:

Հեղազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, հայրենական և արտասահմանյան հեղինակների գործարքային ծախքերի առանձնահատկությունների հետազոտությանը նվիրված ուսումնասիրությունները, տնտեսության ինստիտուցիոնալ բարեփոխումների մշակման և իրականացման տարբեր ասպեկտներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Արենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- Գործարքային ծախքերի տնտեսագիտական բովանդակության և վերջիններիս դասակարգման մոտեցումների ուսումնասիրության արդյունքում ձևակերպվել է տնտեսության գործարքային հատվածի եռամակարդակ կառուցվածքի սահմանում, որի հիման վրա ներկայացվել է դրան համահունչ պետական վիճակագրական տվյալների ներկայացման մասով առաջարկություն, ինչը կնպաստի գործարքային ծախքերի բուն գործառնական նեկայացմանը և տարբեր երկրների վիճակագրական տվյալների համադրելիության ապահովմանը:

- ՀՀ տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքի և առանձնահատկությունների վերլուծության հիման վրա՝ գնահատվել են գործարքային ծախքերի տեսակարար կշիռը տնտեսության համախառն թողարկման և ՀՆԱ կազմում, որից հետո հաշվարկվել են ՀՀ տնտեսության և դրա բազային ու գործարքային հատվածների հարաբերական արդյունավետությունը: ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ առանձնահատկությունների վերհանման հիման վրա՝ ներկայացվել են առաջարկություններ՝ գործարքային ծախքերի կրճատման ուղղությամբ:
- ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի առանձնահատկությունների վերլուծության արդյունքում մշակվել են տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքի ներկայացման նոր մոտեցումներ:
- ՀՀ տնտեսության գործարքային հատվածի կարգավորման նպատակով՝ հիմնավորվել է պետական գործարքային քաղաքականության ձևավորումը, ինչպես նաև առաջարկվել են վերջինիս իրականացման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները:

Արենախոսության գործնական նշանակությունը: ՀՀ տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքի և առանձնահատկությունների, այդ ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտման, հանրապետությունում տնտեսության գործարքային հատվածի պետական կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումների համակարգի վերաբերյալ աշխատանքում կատարված վերլուծությունները և տնտեսության ինստիտուցիոնալ բարեփոխումների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում գործարքային հատվածի կարգավորման, գործարքային ծախքերի կրճատման, տնտեսության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործման միջոցառումների համալիրի մշակման ու իրականացման ուղղությամբ:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 4 հոդվածներում:

Արենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 162 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Արենախոսության առաջին՝ «Գործարքային ծախքերի էությունը և դասակարգման հիմնական մոտեցումները» գլխում ուսումնասիրվել են գործարքային ծախքերի էությունը, տնտեսագիտական բնութագիրը, դասակարգման մոտեցումները, ինչպես նաև տնտեսության մեջ ունեցած դերակատարումը:

Գործարքային ծախքերի գաղափարը տնտեսագիտության տեսության մեջ առաջ քաշվեց Տնտեսագիտության դասական դպրոցի այն գաղափարի փլուզման արդյունքում, ըստ որի՝ շուկայում փոխանակումը տեղի է ունենում առանց որևէ ծախսերի¹:

Գործարքային ծախքերի տեսամեթոդական հիմքերը սկիզբ են առնում Նեոինստիտուցիոնալ տեսության գաղափարարխոսությունից: Նեոինստիտուցիոնալ տեսությունը տնտեսագիտության համեմատաբար երիտասարդ ճյուղ է, որը ձևավորվել է Ինստիտուցիոնալ տեսության զարգացման արդյունքում: Ընդ որում, Ինստիտուցիոնալ տեսության էվոյուցիան դեպի Նեոինստիտուցիոնալ տեսություն հնարավոր դարձավ գործարքային ծախքերի գաղափարի ներդրման արդյունքում²:

Տնտեսագիտության մեջ գործարքային ծախքերի դասակարգման տեսակների բազմազանությունը արդյունք է նշված հիմնախնդրի հետազոտական մոտեցումների բազմաքանակության: Պետք է փաստել, որ ներկայումս, գործարքային ծախքերի համընդհանուր ընդունելի միասնական դասակարգում գոյություն չունի: Մասնավորապես, Օ. Ուիլյամսոնի կողմից գործարքային ծախքերը դասակարգվել է՝ ելնելով գործարքի կնքման պահից կախված՝ «ex ante» և «ex post» ծախքերի, այսինքն, գործարքի կնքումից առաջ և հետո առաջացող գործարքային ծախքերի³: Ի տարբերություն Օ. Ուիլյամսոնի՝ Դ. Նորտի և Ջ. Ուոլլիսի կողմից գործարքային ծախքերն՝ ըստ գործարքների իրականացման գործընթացի փուլերի՝ դասակարգվում են հետևյալ երեք կատեգորիայի⁴.

1) նախնական (ex ante) գործարքային ծախքեր,

2) գործարքի ձևակերպման և փոխանակման գործընթացի ժամանակ իրականացվող (ex interim) ծախքեր,

3) գործարքի կնքումից հետո իրականացվող (ex post) ծախքեր:

Մակրոնկարգակում գործարքային ծախքերի դասակարգումն առավել մանրամասնեցված է ներկայացել Թ. Էգերտսոնի կողմից, որում ընդհանրացված ձևով ներկայացված են գործարքային ծախքերի բավական լայն շրջանակ:⁵ Այսպես, ըստ վերջինիս, գործարքային ծախքերը դասակարգվում են.

- Տեղեկատվության որոնման ծախքեր,
- Բանակցությունների վարման ծախքեր,
- Պայմանագրերի կնքման ծախքեր,
- Մշտադիտարկման ծախքեր,
- Հարկադրման ծախքեր,
- Սեփականության իրավունքի պաշտպանության ծախքեր:

Ինչպես տեսնում ենք գործարքային ծախքերի դասակարգման բազմաթիվ մոտեցումներ գոյություն ունեն տնտեսագիտության մեջ , որոնցից յուրաքանչյուրը այդ ծախքերը դիտարկում է որևէ կոնկրետ տեսանկյունից:

¹ Капелюшников Р. Категория трансакционных издержек. Как это делается: финансовые, социальные и информационные технологии. – М.: Институт коммерческой инженерии. -1994. -№ 3 – С. 32

² В. В. Разумов. Нео-институциональная экономическая теория. Учебное пособие. 2005. стр. 338

³ Уильямсон, О. Экономические институты капитализма / О. Уильямсон. – СПб.: Лениздат, 1996. – 55-59 с.

⁴ North D.C., Wallis J.J. Integration Institutional Change in Economic History // Journal of Institutional and Theoretical Economics. – 1994. – V.150.

⁵ Эггертссон Т. Экономическое поведение и институты: Пер. с англ. – М.: Дело, 2001.

Գործարքային ծախքերի հետազոտության արդյունքում՝ Ռ. Քուլի վերլուծությունը զարգացնելով, Ինստիտուցիոնալ տեսության գաղափարակիցները առաջարկեցին վերջիններիս դասակարգման նոր մոտեցումներ՝ ելնելով գործարքի իրականացման ընթացքում առաջ գալու հաջորդականությունից⁶.

1. Տեղեկատվության որոնման և ստացման հետ կապված ծախքեր,
2. Չափման ծախքեր,
3. Բանակցությունների վարման և պայմանագրի կնքման ծախքեր,
4. Մասնավորեցման և իրավունքների պաշտպանության հետ կապված ծախքեր,
5. Ոչ բարեխիղճ (օպորտունիստական) վարքագծի հետ կապված ծախքեր,
6. Քաղաքականացման ծախքեր:

Բացի վերը նշվածից առկա են նաև այլ դասակարգումներ, որոնք, սակայն հիմնականում տեղավորվում են վերը բերված դասակարգումների այս կամ այն ասպեկտի շրջանակներում:

Արենախոսության երկրորդ՝ «Գործարքային ծախքերի գնահատման մոտեցումները եվ առանձնահատկությունները» գլխում ներկայացվել են գործարքային ծախքերի գնահատման առանձնահատկությունները, այդ ոլորտում համաշխարհային փորձը և այդ ոլորտում առկա հիմնական մոտեցումները:

Գործարքային ծախքերի տեսության առավել դժվար լուծելի խնդիրը թերևս վերջիններիս քանակական գնահատումն է: Հարկ է նշել, որ չնայած գործարքային ծախքերի ընդհանուր տեսության բավական մշակվածությանը, վերջիններիս գնահատման մոտեցումները մինչ օրս բավական վիճելի են: Դեռևս մինչ այժմ գոյություն չունի միասնական մեթոդ, որը հնարավորություն կտա գնահատել ինչպես տնտեսության, այնպես էլ առանձին կազմակերպություններում առկա գործարքային ծախքերը՝ առանց լայնամասշտաբ հատուկ հետազոտությունների անցկացման: Այդպիսի մեթոդի մշակումը բնականաբար կարևոր գիտական հիմնախանդիր է, որը մասնավորապես թույլ կտա որոշել գործարքային ծախքերի առանձնահատկությունները տարբեր տիպի կազմակերպություններում և գնահատել վերջիններիս կապը տնտեսական տարբեր գործոնների հետ:

Այս ոլորտում իրականացված տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ ժամանակակից տնտեսական համակարգերի գործունեության մեջ մեծ է գործարքային ծախքերի տեսակարար կշիռը: Ըստ որոշ փորձագիտական գնահատականների՝ պատրաստի արտադրանքի ինքնարժեքի մեջ գործարքների ձևակերպման և դրանց իրականացման հետ կապված գործարքային ծախքերի տեսակարար կշիռը կազմում է մինչև 70%: Ըստ մեկ այլ գնահատման՝ շուկայական տնտեսության մեջ գործարքային ծախքերի տեսակարար կշիռը կազմում է զուտ արդյունքի միջինում 50-60%-ը⁸:

Գործարքային ծախքերի գնահատման առումով տնտեսագետների շրջանում միասնական դիրքորոշում գոյություն չունի: Որոշ տնտեսագետների կարծիքով՝ գործարքային ծախքերն օժտված չեն բավարար որոշակիությամբ և հետևաբար չեն կարող

6 Капелюшников, Р.И. - Категория трансакционных издержек. Как это делается: финансовые, социальные и информационные технологии. - М.: Институт коммерческой инженерии. - 1994. - № 3. - С. 31

7 Лафта Дж. К. Эффективность менеджмента организации: учеб. пособие / Дж.К. Лафта – М.: Русская Деловая Литература, 1999. – 320 с., с. 217

8 Неоинституциональная экономическая теория: Учебное пособие / Под ред. В.В. Разумова. М.: Финансовая академия при Правительстве РФ, 2005. - 338 с.

չափվել տնտեսական գործունեություն իրականացնող այս կամ այն սուբյեկտի մոտ: Վերջինս պայմանավորված է նրանով, որ գործարքն իրենից ներկայացնում է յուրահատուկ ու ստեղծագործական գործընթաց, որի առանձին տարրերը նախօրոք չեն կարող ճշգրտորեն գնահատվել: Մասնավորապես, նախօրոք հայտնի չի կարող լինել այն ռեսուրսների ճշգրիտ արժեքները, որոնք անհրաժեշտ են գործարքի իրականացման համար: Ընդ որում, շուկայական փոխազդեցության մասնակիցների միջև գործարքային ծախքերի բաշխման խնդրի բարդությունը կայանում է նախևառաջ նրանում, որ միևնույն ռեսուրսների նկատմամբ անհատներն ունեն տարբեր նախապատվություններ: Հակառակ նշված կարծիքին՝ գործարքային ծախքերի տեսության կողմնակիցները կարծում են, որ այդ ծախքերի դիտարկումը տնտեսական վերլուծության շրջանակներում և դրանց քանակական գնահատումը թույլ կտա առավել իրատեսական պատկերացում ունենալ տնտեսական գործարքների արդյունավետության մասին:

Գործարքային ծախքերը կարելի է գնահատել մի քանի եղանակներով, մասնավորապես.

- կառավարման այլընտրանքային դիսկրետ կառուցվածքների համեմատական վերլուծությամբ,
- ծախքերի տարր առ տարր տարանջատմամբ՝
- շուկա մտնելու ծախքեր (ֆիրմայի գրանցում, լիցենզիայի կամ արտոնագրի ստացում և այլն);
- սեփականության իրավունքի փոխանցման ծախքեր,
- պայմանագրերի կնքման և պայմանագրային իրավունքների պաշտպանության ծախքեր,
- ֆիրմայի ներսում որոշումների ընդունման հետ կապված ծախքեր և այլն:

Ներկայումս տնտեսագիտության մեջ գոյություն ունի գործարքային ծախքերի գնահատման երկու հիմնական մոտեցումներ՝ կարգային և քանակական:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ կարգային մոտեցումը ավելի գերիշխող է նոր ինստիտուցիոնալ տեսության շրջանակներում և հետազոտողների մեծ մասը կիրառում են հենց այս մոտեցումը: Ըստ այս մոտեցման՝ գործարքային ծախքերի հայեցակարգի կիրառման համար կարևոր նշանակություն ունի միայն վերջիններիս մակարդակի փոփոխության գնահատումը: Նշված հետազոտական պրակտիկայի շրջանակներում, գործարքային ծախքերը հանդիսանում են միջոց՝ հասկանալու տնտեսական կազմավորման այլընտրանքային ձևերը և պայմանագրային համաձայնագրերի առանձնահատկությունները: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս մոտեցման շրջանակում՝ կատարված մի գործարքի արժեքը հարաբերվում է մյուսներին և հետևաբար, կարևոր է, ոչ թե այն, թե որքան է գործարքային ծախքի բացարձակ արժեքը, այլ կազմակերպական կամ պայմանագրային գործարքային ծախքերի հարաբերակցությունը: Կարգային մոտեցման կողմնակիցները բացատրում են տնտեսության մեջ կամ դրա առանձին ճյուղում գործարքների կառուցվածքի փոփոխությունները՝ ներֆիրմային ծախքերը շուկայականի վերածմամբ, և ընդհակառակը, իսկ հիբրիդային ինստիտուցիոնալ համաձայնագրերի ի հայտը՝ գործարքային ծախքերի հարաբերական փոփոխություններով և այլն:

Հիմնվելով գործարքի՝ որպես վերլուծության միավոր ընդունման և համեմատական ինստիտուցիոնալ վերլուծության վրա, կարգային հետազոտությունները կարող են կարևոր

դերակատարում ունենալ գործարքային ծախքերի բացարձակ մակարդակի կրճատման համար:

Ի տարբերություն կարգային մոտեցման՝ քանակական մոտեցման շրջանակներում կատարվում է գործարքային ծախքերի անմիջական քանակական գնահատում՝ ինչպես մեկ առանձին շուկայի՝ միկրոմակարդակում, այնպես էլ ամբողջ տնտեսության մակարդակով՝ մակրոմակարդակում: Առաջին անգամ միկրոմակարդակում կամ առանձին վերցված շուկայում գործարքային ծախքերի չափման փորձ իրականացվեց ամերիկացի հետազոտող Հարոլդ Դեմսեցի կողմից 1968 թվականին:⁹ Որպես հետազոտության օբյեկտ՝ Դեմսեցն ընտրել էր Նյու Յորքի ֆոնդային բորսան (ՆՖԲ)՝ որպես արժեթղթերի և համապատասխանաբար իրական ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքների արագ փոխանակումն ապահովող կառույց: Այդ առումով, գործարքային ծախքերը վերջինիս կողմից սահմանվեցին որպես բաժնետոմսերն արագ փողի վերածելու նպատակով ՆՖԲ-ի ծառայությունների գծով ծախքեր: Տնտեսության դրամական հատվածի ոլորտներից մեկի ընտրությունը՝ որպես գործարքային ծախքերի քանակական չափման օբյեկտ՝ որոշակի իմաստով օրինաչափ էր, քանի որ հենց փողի տեսության շրջանակներում գործարքային ծախքերի հետազոտությունը բավական լայնորեն ներկայացված է՝ ընդհուպ մինչև Նոր ինստիտուցիոնալ տեսության գործիքակազմի էմպիրիկ հետազոտությունների լայն տարածումը:

Ինչ վերաբերվում է ամբողջ տնտեսության մակարդակով գործարքային ծախքերի գնահատման խնդրին, ապա այդ ուղղությամբ առաջին փորձն իրականացվեց Ջ. Ուոլլիսի և Դ.Նորտի կողմից՝ ԱՄՆ տնտեսության օրինակով:¹⁰ Այդ հետազոտության արդյունքներն արտացոլվեցին նշված հեղինակների «Ամերիկյան տնտեսության տրանսակցիոն հատվածի չափումը 1870-1970թթ.» հոդվածում:¹¹ Մինչ օրս էլ նշված աշխատությունը արդիական է համարվում՝ չնայած գործարքային ծախքերի ոլորտում առկա հետազոտությունների բազմազանությանը:

Արենախոսության երրորդ՝ «Գործարքային ծախքերը ՀՀ տնտեսությունում և դրանց նվազեցման ուղիները» գլխում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում գործարքային հատվածի կառուցվածքային յուրահատկությունները, գնահատվել են գործարքային ծախքերը ՀՀ տնտեսության մակրոմակարդակում, ինչպես նաև առաջարկվել են գործարքային ծախքերի նվազեցման ուղիները ՀՀ-ում:

Դ. Նորտի և Ջ. Ուոլլիսի կողմից ներկայացված գործարքային ճյուղերի դասակարգման թերությունները հաշվի առնելով, կարծում ենք, որ կարելի է կիրառել այլընտրանքային մոտեցում՝ սահմանելով ավելի ընդհանուր չափորոշիչներ, որը թույլ կտա խմբավորել գործարքային հատվածում ներառվող ճյուղերը: Մասնավորապես, կարելի է դասակարգել գործարքային ճյուղերը՝ կախված վերջիններիս գործառնական առանձնահատկություններից: Ըստ վերոգրյալի, շուկայական գործարքային հատվածում կարող են առանձնացվել մասնավորապես ֆինանսները, առևտուրը և ծառայությունները, տեղեկատվական և ինտելեկտուալ ոլորտի ճյուղերը: Նման դասակարգումը թույլ է տալիս տարբերակել գործարքային ոլորտի կառուցվածքում ներառվող բոլոր ճյուղերն՝ ըստ դրանց

⁹ Demsetz, Harold (1968), Cost of Transacting, 81 Quarterly Journal of Economics, 33-53

¹⁰ Капелюшников Р.И. Заметки на полях неинституционального подхода // Фактор трансакционных издержек в теории и практике российских реформ: по материалам одноименного Круглого стола / Под ред. В.Л. Тамбовцева. - М.: Экономический факультет, ТЕИС, 1998. с. 52-70.

¹¹ Wallis, John J. and North, Douglass C (1986), Measuring the Transaction Sector in the American Economy, 1870-1970, in Long-term factors in American Economic Growth, Stanley Engermann and Robert Gallman (eds.), Chicago: University of Chicago Press, 95-161.

գործառնական նշանակության: Գործարքային հատվածի նման կառուցվածքը կկազմի վերջինիս միջանկյալ մեզոմակարդակը: Այսպիսով մեզոմակարդակում ներառվում են գործարքային ճյուղերը՝ բացի պետական ենթահատվածից: Վերջինս գործարքային հատվածի մեզոմակարդակում ներառված ճյուղերի հետ միասին կկազմի գործարքային հատվածի մակրոմակարդակը: Ինչ վերաբերվում է միկրոմակարդակին, ապա այն ներառում է կոնկրետ կազմակերպության կամ առանձին ճյուղում ներառվող գործարքային ծախքերը: Գործարքային հատվածի նման եռամակարդակ ներկայացումը թույլ է տալիս դիտարկել գործարքային հատվածի բոլոր բնորոշ կողմերը և միաժամանակ խուսափել առանձին ենթահատվածների միակողմանի մոտեցմամբ դիտարկումից, քանի որ վերջիններիս բոլոր տարրերը գտնվում են սերտ փոխկապվածության մեջ:

Այսպիսով, ՀՀ տնտեսության գործարքային հատվածը կարելի է ներկայացնել հետևյալ եռամակարդակ կառուցվածքով՝

-միկրոմակարդակ՝ առանձին կազմակերպության կամ գործարքային ճյուղի գործարքային ծախքերը,

-մեզոմակարդակ՝ գործարքային շուկայական ենթահատվածի ըստ գործառնական նշանակության խոշորացված ոլորտներ՝ ֆինանսներ, առևտուր և ծառայություններ, տեղեկատվական և ինտելեկտուալ ոլորտներ,

-մակրոմակարդակ, որը ներառում է գործարքային հատվածի մեզոմակարդակը և պետական գործարքային հատվածը:

Հաշվի առնելով վերոգրյալը, միանգամայն հիմնավորված ենք համարում, որպեսզի պետական վիճակագրական ծառայությունների կողմից հրապարակվող հաշվետվություններում արտադրության կառուցվածքում գործարքային ճյուղերը ներկայացվեն ըստ դրանց մեզոմակարդակի, որն ավելի դյուրին կդարձնի գործարքային ծախսերի հաշվառումն ու խմբավորումն ըստ վերջիններիս գործառնական նշանակության, ինչպես նաև կապահովվի վերջիններիս համադրելիությունն ըստ առանձին երկրների :

ՀՀ տնտեսության մեջ գործարքային ծախքերի գնահատումը մակրոմակարդակում կիրականացվի հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ ազգային հաշիվների համակարգի արտադրության հաշիվներում ներկայացվող տնտեսական ճյուղերի համապատասխան դասակարգումը: ՀՀ ԱՎԾ արտադրության հաշիվներում ներկայացվող տնտեսական ճյուղերի կազմում գործարքային ճյուղեր են հանդիսանում՝ մեծածախ և մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգումը, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, անշարժ գույքի հետ կապված գործունեությունը, վարչարարական և օժանդակ գործունեությունը, պետական կառավարումը և պաշտպանությունը, պարտադիր սոց. ապահովագրությունը: Այսպես, ըստ նշված տվյալների՝ գործարքային ծախքերի տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության համախառն թողարկման կառուցվածքում վերջին հինգ տարիների ընթացքում կազմել է միջինում 26.4%, ունենալով ցածր, բայց միևնույն ժամանակ կայուն դրական դինամիկա՝ բացառությամբ 2015 թվականի: Ըստ վերը ներկայացված դասակարգման՝ ՀՀ տնտեսության մեջ գործարքային ճյուղերի թողարկումը 2011-2015թթ. ունեցել է հետևյալ պատկերը (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

ՀՀ տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքը 2011-2015թթ¹², մլն դ.

Հ/Հ	Անվանումը	2011	2012	2013	2014	2015
1	Մեծ.և մանրածախ առևտուր, ավտոմեք. և մոտոցիկլ. նորոգում	671061	710834	753523	789432	759920
2	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	190841	217057	230784	257731	247628
3	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	138423	392397	411852	448873	496629
4	Վարչարարական և օժանդակ գործունեություն	50802	57570	53441	57610	62815
5	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովագրություն	257956	230853	266309	297431	340299
6	Ընդամենը գործարքային հատվածի համախառն թողարկում՝ հիմնական գներով	1309084	1608711	1715909	1851076	1907291
7	ԳՀ միջանկյալ սպառում	399169	373763	391206	421255	444160
8	ԳՀ ավելացված արժեք	90991	1234948	1324703	1429822	1463131
9	ԳՀ ավելացված արժեք/ԳՀ հիմնական թողարկում	69.5	76.8	77.2	77.2	76.7

Ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունները վկայում են, որ ՀՀ տնտեսության գործարքային հատվածի ավելացված արժեքի ցուցանիշը դրական դինամիկա է ունեցել վերջին 5 տարիների ընթացքում՝ 69.5% տոկոսից հասնելով մինչև 76.7%-ի: Սա խոսում է այդ հատվածի ճյուղերի արդյունավետության մասին: Եթե նույն ցուցանիշը վերլուծենք ամբողջ տնտեսության և դրա բազային հատվածի համար, ապա կտեսնենք հետևյալ պատկերը (աղյուսակ 2).

Աղյուսակ 2

ՀՀ տնտեսության և վերջինիս բազային հատվածի հարաբերական արդյունավետությունը՝ 2011-2015թթ.¹³, մլն.դ.


Հ/Հ	Անվանումը	2011	2012	2013	2014	2015
1	Համախառն թողարկում	5485212	5989852	6380782	6754006	7046632
2	Տնտեսության ավելացված արժեք	3365622	3808226	4049210	4282291	4496393
3	Ավելացված արժեք/համախառն թողարկում	61.4	63.6	63.5	63.4	63.8
4	Բազային հատվածի (ԲՀ) հիմնական թողարկում	4176129	4381141	4664874	4902929	5139340
5	ԲՀ միջանկյալ սպառում	1720422	1807863	1940367	2050460	2106079
6	ԲՀ ավելացված արժեք	2455707	2573278	2724508	2852470	3033262
7	ԲՀ ավելացված արժեք/ԲՀ հիմնական թողարկում	58.8	58.7	58.4	58.1	59.0

¹²ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ազգային հաշիվների համակարգ-Տարեգիրք 2016-
<http://armstat.am/am/?nid=586&year=2016>

¹³ ՀՀ ԱՎԾ-Ազգային հաշիվների համակարգ-<http://armstat.am/file/doc/99499428.pdf>

Ինչպես տեսնում ենք, ՀՀ տնտեսության բազային հատվածի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ավելի ցածր է գործարքային հատվածի համանման ցուցանիշից, ինչպես նաև ցածր է եղել վերջինիս աճի դինամիկան:

Ստորև բերվող գծապատկեր 1-ում ներկայացվում են ՀՀ տնտեսության, վերջինիս գործարքային և բազային հատվածների հարաբերական արդյունավետությունը՝ 2011-2015թթ. ժամանակահատվածում:




Գծապատկեր 1 Տնտեսության և նրա հատվածների հարաբերական արդյունավետությունը ՀՀ-ում՝ 2011-2015թթ.(%-ով)

Գործարքային հատվածի միջին արդյունավետությունը 2011-2015թթ. կազմել է 75.5%, բազային հատվածինը՝ 58.6%, իսկ ամբողջ տնտեսությանը՝ 63.1%: Այսպիսով դատելով վերը բերված տվյալներից՝ ՀՀ տնտեսության գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությունը վերջին հինգ տարիներին ավելի բարձր է եղել, քան ամբողջ տնտեսության և դրա բազային հատվածի արդյունավետությունը: Ընդ որում, բազային հատվածի արդյունավետությունը մոտ է ընդհանուր տնտեսության արդյունավետությանը՝ զիջելով վերջինիս ընդամենը 3.5%-ով, իսկ գործարքային հատվածին այն զիջում է շուրջ 17%-ով: Նշենք, որ գործարքային հատվածի միջին արդյունավետությունը նշված տարիներին գերազանցել է տնտեսության միջին արդյունավետությունը՝ 12.4%-ով: Այսպիսով, ՀՀ տնտեսության բազային հատվածի ավելացված արժեքի տեսակարար կշիռն ավելի ցածր է գործարքային հատվածի համանման ցուցանիշից, ինչպես նաև ցածր է եղել վերջինիս աճի դինամիկան:

Այսպիսով, ՀՀ տնտեսության հարաբերական արդյունավետությունը 2012-2015թթ. գրեթե չի փոխվել, մնալով՝ 63% մակարդակի վրա, ինչը կարելի է ասել նաև բազային հատվածի մասին: Նույն ժամանակահատվածում վերջինս գտնվել է մոտ 58% մակարդակի վրա: Ինչ վերաբերվում է գործարքային հատվածին, ապա այստեղ տեսնում ենք էական աճ. վերջին 5 տարվա ընթացքում այն աճել է 7.2%-ով:

Ինչ վերաբերվում է ՀՆԱ կազմում գործարքային ծախքերի մասնաբաժնին, ապա դրա հաշվարկման արդյունքում տեսնում ենք հետևյալ պատկերը.



Գծապատկեր 2. Գործարքային հատվածի և ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում՝ 2011-2015թթ.,(%-ով)¹⁴

Ինչպես երևում է ներկայացված գծապատկերից, 2011-2015թթ. ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ կազմում հստակ աճի միտում է ունեցել և 2015թ. դրությամբ այդ աճը կազմել է 5%: Նշված ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ-ում միջին հաշվով կազմել է 28.2%, ինչը 1.8%-ով գերազանցում է համախառն թողարկման մեջ գործարքային հատվածի տեսակարար կշռի միջին ցուցանիշին: Անդրադառնալով գործարքային հատվածի առանձին ոլորտների արդյունավետությանը, կարող ենք նշել, որ ամենաբարձր հարաբերական արդյունավետություն են ունեցել անշարժ գույքի հետ կապված գործունեության և ֆինանսական ու ապահովագրական գործունեությունների ոլորտները՝ դիտարկվող ժամանակահատվածում միջինում համապատասխանաբար՝ 86.1% և 79.1%: Ամենացածր արդյունավետությունն է ունեցել է պետական կառավարման և պաշտպանության, պարտադիր սոց. ապահովագրության ենթահատվածը՝ միջինում կազմելով 66.3%: Մանրածախ և մեծածախ առևտրի, ավտոմեքենաների ու մոտոցիկլետների նորոգման և վարչարարական ու օժանդակ գործունեության ոլորտների հարաբերական արդյունավետությունը գործակիցները միջին ցուցանիշը գտնվում են նույն մակարդակի վրա՝ 72.2%:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ սկսած 1991 թվականից, երբ այն կազմում էր ՀՆԱ շուրջ 7%-ը, աստիճանաբար աճելով արդեն 1995 թվականին կազմել է 13.5%¹⁵, 2001 թվականին՝ 16.7%¹⁶, իսկ 2015 թվականին՝ 29.1%¹⁷: Ինչպես տեսնում ենք, վերջին տասնհինգ տարիների ընթացքում գործարքային ծախքերի տեսակարար կշիռը աճել է շուրջ 22%-ով: Գործարքային ծախքերի աճն առաջին հերթին պայմանավորված էր տնտեսության

¹⁴ ՀՀ ԱՎԾ-Ազգային հաշիվների համակարգ-<http://armstat.am/file/doc/99499428.pdf>


¹⁵ http://armstat.am/file/article/azghashiv_90_97_3.pdf

¹⁶ <http://armstat.am/file/article/sns-iii.2.pdf>

¹⁷ <http://armstat.am/file/doc/99499428.pdf>

վերարտադրության համակարգի արմատական ձևափոխմամբ, որն ուղեկցվում էր բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների ի հայտ գալով, շուկայական փոխազդեցությունների վրա կատարվող ծախքերի աճով, փոխազդեցությունների նոր ձևերի որոնմամբ, վարքի համընդհանուր ընդունված ստանդարտների բացակայությամբ, ենթակառուցվածքային համակարգերի վրա աճող ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև շուկայական պայմաններին հարմարվելու անհրաժեշտությամբ:

Պարզելու համար գործարքային հատվածի կառուցվածքի և տնտեսության մեջ տեսակարար կշռի ազդեցությունը տնտեսության արդյունավետության վրա, համեմատենք դրանք հետխորհրդային երկրներից Վրաստանի համանման ցուցանիշների հետ: Անդրադառնալով ՀՆԱ-ում գործարքային ճյուղերի ունեցած մասնաբաժնին, ապա երկու երկրներում այդ ցուցանիշի շարժընթացը բերվում է ստորև՝ գծապատկեր 3-ում :



Գծապատկեր 3. Հայաստանի և Վրաստանի տնտեսության գործարքային հատվածի և ՀՆԱ հարաբերակցությունը և դրա շարժընթացը¹⁸

ՀՀ-ում գործարքային հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ կազմում առավել քան միջինում 10 տոկոսային կետով զիջում է Վրաստանի նույն ցուցանիշին: Ընդ որում, ըստ ատենախոսությունում իրականացված վերլուծության՝ Վրաստանի գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությունը զիջում է Հայաստանի գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությանը 5-6%-ով (2012-2015թ), ինչի հետևանքով, չնայած ՀՆԱ-ում գործարքային ծախսերի զգալիորեն բարձր տեսակակար կշռին, Վրաստանի բազային հատվածի հարաբերական արդյունավետությունը գտնվում է Հայաստանի բազային հատվածի հարաբերական արդյունավետության հետ համադրելի մակարդակի վրա:

Գործարքային ծախքերի առկայությունը տնտեսության մեջ բնականաբար ազդում են տնտեսական գործունեության արդյունավետության վրա: Թեև ինչպես վերոհիշյալ վերլուծությունների արդյունքում պարզվեց, որ գործարքային հատվածն ունեցել է բարձր հարաբերական արդյունավետություն, սակայն վերջինս չի նպաստել ՀՀ տնտեսության

¹⁸ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ http://geostat.ge/index.php?action=wnews_archive1&qy=1&qy1=16&lang=eng և <http://armstat.am/file/doc/99499428.pdf> կայքերում արտացոլված տվյալների հիման վրա

արդյունավետության բարձրացմանը և կայուն աճին: Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է հստակ քայլեր ձեռնարկել այդ հատվածում ծախքերի կրճատման ուղղությամբ (օրինակ, պետական կառավարման ոլորտում)՝ դրա հաշվին ավելացնելով տնտեսության բազային հատվածի հեռանկարային ճյուղերի ֆինանսավորումը, ինչը մեր հանրապետությունում կապահովի տնտեսության ավելի բարձր արդյունավետություն ու կայուն աճ:

Միանգամայն ակնհայտ է, որ գործարքային ծախքերի նվազեցումն ամբողջ տնտեսության վերարտադրության համակարգի մակարդակով զգալի մրցակցային առավելություններ կստեղծի մեր ազգային տնտեսության համար՝ նպաստելով վերջինիս կայուն զարգացմանը:

Տնտեսական համակարգերում գործարքային ծախքերը կարող են կառավարվել և նվազագույնի հասցվել նպատակաուղղված պետական քաղաքականության միջոցով, քանի որ վերջինս այս ոլորտում օժտված է օրենսդրությամբ իրեն վերապահված լծակներով, ինչպես նաև կարգավորիչ միջոցառումների լայն համալիրով: Գործարքային հատվածի կարգավորման ոլորտում պետության գլխավոր գործառույթը կարելի է համարել ֆորմալ ինստիտուտների ձևավորումն ու դրանց աջակցության գործուն համակարգի ներդրումը, քանի որ գործարքային ծախքերի նվազեցումն, ի թիվս այլ գործառույթների, հանդիսանում է տնտեսական ինստիտուտների կարևորագույն նպատակը և արդյունքը:

Հայաստանի Հանրապետությունում անցումային շրջանում շուկայական տնտեսակարգին հարիր գործունեություն ծավալելու փորձի բացակայությունը, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների միջև հակասությունները հանգեցրին տնտեսության ստվերային հատվածի աճի, ձևավերելով այպես կոչված «անձի տնտեսություն», որում մեծ դերակատարում ունեն անձնական կապերը, հովանավորչությունը և այլ բացասական դրսևորումներ: Բնականաբար, տնտեսական հարաբերությունների անձնավորումը սահմանափակում է ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների արդյունավետությունը և խոչընդոտներ է ստեղծում ազգային տնտեսության զարգացման համար:

Տնտեսության մեջ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների հակասությունների պայմաններում՝ զգալիորեն աճում է գործարքային ծախքերի բեռը տնտեսության լեզալ հատվածում գործող սուբյեկտների վրա: Արդյունքում՝ տեղի է ունենում ստվերային տնտեսության արմատավորում և դրան բնորոշ ստվերային մեթոդների լայն տարածում ամբողջ հասարակական հարաբերությունների վրա, ինչը բնականաբար բացասաբար է անդրադառնում ինչպես տնտեսվարողների, այնպես էլ ողջ ազգաբնակչության վրա:

Գործարքային հատվածի զգալի տեսակարար կշիռը տնտեսության կառուցվածքում և ճգնաժամային երևույթները, որոնք արձանագրվեցին վերջին ժամանակահատվածում այդ հատվածի շրջանակներում, նախանշում է պլանավորված և բազմամակարդակ ծրագրի անհրաժեշտություն, որը կնպաստի այդ հատվածի և դրա առանձին ներքին տարրերի կատարելագործմանն ու տնտեսության մեջ գործարքային ծախքերի նվազեցմանը: Այդ միջոցառումների ամբողջությունը կներառվի կառավարության գործարքային քաղաքականության շրջանակում: Այդ միջոցառումների համալիրը պետք է ապահովի գործարքային հատվածի կարգավորումը՝ հետևյալ օբյեկտների վրա նպատակաուղղված ազդեցությունների և դրանց արդյունավետության հետագա գնահատման միջոցով.

- կառավարման համակարգ,
- ֆինանսական ինստիտուտներ,
- սեփականության իրավունք,
- դատական համակարգ,

- մարդկային կապիտալ,
- քաղաքացիական կուլտուրա,
- գաղափարախոսություն, մտածողություն,
- կոռուպցիա և այլն:

Կարող ենք նշել, որ ինստիտուցիոնալ բարեփոխումների նմանօրինակ նպատակային ծրագրի մշակման և իրագործման դեպքում հիմնական դժվարությունները կապված կլինեն իրականացվելիք բարեփոխումների հետևանքների դժվար կանխատեսելիության հետ, պայմանավորված գործոնների լայն սպեկտրի առկայությամբ, որոնց ազդեցությունները բնականաբար անհրաժեշտ է հաշվի առնել:

Գործարքային հատվածի ինստիտուցիոնալ բարեփոխումների համար ներկա փուլում անհրաժեշտ է որդեգրել գործարքային քաղաքականության հետևյալ սկզբունքները՝

- պետության կողմից առանցքային դերակատարման և հստակ պատասխանատվության ստանձնումը՝ ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացում,
- գործարքային հատվածի օպտիմալացման և տնտեսության զարգացման ոլորտում պետության շահագրգիռ մոտեցումը,
- պետական կառավարման համակարգում «խաղի կանոններ սահմանելու և որակյալ ծառայություններ մատուցելու» սկզբունքի գերակայության ապահովումը,
- բիզնես և ներդրումային միջավայրերի շարունակական բարելավումը,
- նորարարական տեխնոլոգիաների ներգրավվածության ընդլայնումը,
- տնտեսական հարաբերություններում հավասար մրցակցային պայմանների ապահովումը,
- ֆորմալ ինստիտուտների անհակասության ապահովումը,
- ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների մերձեցումը ու փոխգործակցությունը,
- ինստիտուցիոնալ այլընտրանքերի լայն համալիրի ապահովումը,
- արտոնությունների վերանայումը և գործարքային ծախսերի հավասարաչափ բաշխումը տնտեսվարող սուբյեկտների վրա,
- հասարակական կազմակերպությունների դերակատարման բարձրացումը:

Ընդհանուր առմամբ, միջոցառումների ողջ համալիրը, որը կիրականացվի պետական գործարքային քաղաքականության շրջանակներում՝ կապված ընգրկող օբյեկտների շրջանակի մեծությունից, կարող ենք դասակարգել երկու տեսակի՝

- ընդհանուր համակարգային,
- ընտրովի:

Առաջին տեսակին դասվող համընդհանուր համակարգային միջոցառումների շրջանակը կներառի այնպիսի ինստիտուցիոնալ, իրավական և տնտեսական պայմանների ապահովումը, որոնք թույլ կտան առավելագույնս զարգացնել տնտեսության գործարքային հատվածի սուբյեկտների կողմից ցուցաբերվող ակտիվությունը: Նման գործողությունները իրականացվող գործարքային քաղաքականության շրջանակներում չունեն կոնկրետ ուղղվածություն, փոխարենը ազդեցություն են ցուցաբերում այդ հարաբերությունների բոլոր մասնակիցների վրա՝ ձևավորելով գործունեության համընդհանուր կանոններ՝ դրանով իսկ նպաստելով վերջիններիս համար հավասար պայմանների ապահովմանը:

Ինչ վերաբերվում է գործարքային քաղաքականության ընտրանքային միջոցառումներին, ապա վերջիններիս են դասվում այն գործողությունները, որոնց միջոցով

իրականացվում է գործարքային հատվածի առանձին տարրերի զարգացման վրա նպատակաուղղված, ինչպես նաև անուղղակի ազդեցությունը՝ դրանց հետ կապակցված ինստիտուտների վրա: Այսպիսի ընտրովի ազդեցությունը նպաստում է ոչ միայն գործարքային հատվածի, այլև դրա առանձին կառուցվածքային բաղադրիչների առավել որակյալ, խորը և համակողմանի զարգացմանը:

Լուրջ անելիքներ կան պետական կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ: Ինչպես վերևում արձանագրվեց, պետական կառավարման, պաշտպանության և սոցիալական ապահովագրության ոլորտներում իրականացված գործարքային ծախքերն ունեցել են ամենացածր արդյունավետությունը գործարքային ճյուղերի կազմում: Հաշվի առնելով վերջինս, անհրաժեշտ ենք համարում՝

- կրճատել պետական ապարատի պահպանման ծախքերը,
- պետական վերահսկողական գործառույթներին զուգահեռ ապահովել տնտեսվարող սուբյեկտներին և ազգաբնակչությանը որակյալ, մրցունակ և պատշաճ որակով պետական ծառայությունների մատուցումը,
- հստակեցնել և օպտիմալացնել պետական կառավարման մարմինների գործառույթները, վերջիններիս շրջանակում մասնագիտական, սպասարկման և այլ ծառայությունների մի մասը պատվիրակել մասնավոր հատվածի ընկերություններին,
- ընդլայնել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման տիրույթը,
- պարզեցնել և միասնականացնել տնտեսվարողների կողմից ներկայացվող հաշվետվությունները,
- արագացնել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը,
- իրականացնել հանրային ռեգիստրների հետագա բարեփոխումներ:

Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության և գործարքային ծախքերի կրճատման ապահովման համար առաջնային պայման է հանդիսանում մրցակցության միջոցով տնտեսական և իրավական հավասար պայմանների ստեղծումը տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար:

Կարծում ենք, որ ՀՀ-ում ստվերային գործունեության առաջացման և տնտեսության մեջ դրա բարձր մակարդակի միակ պատճառը հանդիսանում է տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի անկատարությունը, պետական հարկային քաղաքականության բացթողումները, կառավարման մարմիններում առկա կոռուպցիոն երևույթները, որոնք հանգեցնում են տնտեսության մեջ գործարքային ծախքերի անհավասարաչափ բաշխման և տնտեսության արդյունավետության նվազման:

Տնտեսության մեջ ստվերի և կոռուպցիայի կրճատման ուղղությամբ կարծում ենք անհրաժեշտ է՝

- վերացնել այն գործառույթները, որոնք բիզնեսի և քաղաքացիների համար ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ,
- բացառել պետական կառավարման ոլորտում պաշտոնատար անձանց սեփական բիզնես շահերը,
- խստացնել պետական կառավարման համակարգում պաշտոնյաների արհեստավարժության նկատմամբ մասնագիտական պահանջները և որակյալ մասնագետների ներգրավման հստակ մեխանիզմների ստեղծել,

- ապահովել հանրությանը մատուցվող արդարադատության ոլորտի ծառայությունների առավել մատչելիությունը, ընդլայնել սպասարկման կենտրոնների ցանցը և արդարադատության ոլորտի ծառայությունների գերակշիռ մասը մատուցել առցանց եղանակով:

Ներդրումների միջավայրի բարելավման ոլորտում նպատակաուղղված ներքոհիշյալ միջոցառումները ևս կնպաստեն գործարքային ծախքերի կրճատմանը, մասնավորապես.

- ներդրումային գործունեության տեղեկատվական ապահովման ուղղությամբ պետական աջակցության ցուցաբերում գործող և նոր ստեղծվող խորհրդատվական ընկերություններին, բիզնես-պլանների մշակման և նախագծերի իրականացման ոլորտում,
- փոքր և միջին ձեռնարկություններին տեղեկատվական աջակցություն, մասնավորապես, իրավական, հարկային և այլ ոլորտներին և հիմնահարցերին առնչվող խորհրդատվության տրամադրում,
- արբիտրաժների գործունեության ինստիտուտի ներդրում և զարգացում՝ տնտեսական վեճերի արագ և մատչելի լուծման համատեքստում,
- առևտրա-արդյունաբերական պալատի գործունեության արդյունավետության բարձրացում,
- ներդրումների աջակցության նպատակով պետական օժանդակություն ստանալու համար դիմումների ներկայացման և քննարկման ժամկետների նվազեցում,
- դիմումների քննարկումների և որոշումների կայացման թափանցիկության ապահովում,
- արտոնյալ վարկերի կիրառում, գործող և սկսնակ ձեռնարկություններին՝ վարկային երաշխավորությունների տրամադրում,
- շուկայի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական բազայի ձևավորում:

Կարծում ենք, որ ռեինժինիրինգի ոլորտում համապատասխան լուծումները և այդ ոլորտում արհեստավարժ խորհրդատվական ծառայությունների զարգացումը ևս կարող են էականորեն նվազեցնել գործարքային ծախքերը համապատասխան ոլորտներում: Մասնավորապես, տնտեսության մեջ կորպորացիաների ձևավորումը՝ ընկերությունների կլանման, միաձուլման և միացման միջոցով նպաստում են տնտեսմանը՝ գործարքային ծախքերի կրճատման հաշվին:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և արված վերլուծությունների արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները.

1. Կապված այն բանի հետ, թե գործարքային ծախքերն ինչպիսի մասնաբաժին ունեն շուկա հանվող ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի կազմում, վերջին հաշվով կախված է ինչպես առանձին տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ ամբողջ ազգային տնտեսության արդյունավետությունը և մրցունակությունը:
2. Գործարքային ծախքերը բնութագրվում են անորոշության բարձր աստիճանով, ինչը պայմանավորված է նրանով, որ գործարքն իրենից ներկայացնում է յուրահատուկ ու ստեղծագործական գործընթաց, որի առանձին տարրերը նախօրոք չեն կարող ճշգրտորեն գնահատվել: Գործարքային ծախքերի հայեցակարգի հիմքում ընկած է մարդկային վարքի վերաբերյալ երկու հիմնական ենթադրություններ՝ սահմանափակ ռացիոնալություն և ոչ բարեխիղճ վարքագիծ:

3. Նեղ իմաստով՝ գործարքային ծախքերը հանդիսանում են փոխանակման ոլորտում առկա ծախքերը՝ կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Իսկ ավելի լայն իմաստով գործարքային ծախքեր են հանդիսանում բուն արտադրական ծախքերից ավել կատարված բոլոր ծախքերը:
4. Գործարքային ծախքերի տեսության առավել դժվար լուծելի, սակայն, միևնույն ժամանակ կարևորագույն խնդիրը համարվում է վերջիններիս քանակական գնահատումը:
5. Ելնելով գործարքի իրականացման ընթացքում առաջ գալու հաջորդականությունից՝ գործարքային ծախքերը դասակարգվում են հետևյալ հիմնական խմբերի.
 - տեղեկատվության որոնման և ստացման հետ կապված ծախքեր,
 - չափման ծախքեր,
 - բանակցությունների վարման և պայմանագրի կնքման ծախքեր,
 - մասնավորեցման և իրավունքների պաշտպանության հետ կապված ծախքեր,
 - ոչ բարեխիղճ (օպորտունիստական) վարքագծի հետ կապված ծախքեր,
 - քաղաքականացման ծախքեր:
6. Գործարքային հատվածի մեջ նեղ իմաստով ներառվում են բացառապես գործարքային ճյուղերը, մասնավորապես, ֆինանսական ոլորտը, մանրածախ առևտուրը, որոնք իրենց գործունեության ընթացքում չեն իրականացնում ակտիվների տրանսֆորմացիա և գործ ունեն միայն ոչ իրական ակտիվների հետ: Գործարքային հատվածը ավելի լայն առումով դիտարկելիս՝ անհրաժեշտ է վերջինիս մեջ ներառել այն բոլոր ինստիտուտների համախումբը, որոնք նպաստում են ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքների փոխանցման, վերջիններիս ամրագրման և կողմերի ստանձնած պարտավորությունների իրականացման նկատմամբ հետագա հսկողության հետ կապված գործընթացների ինտենսիվացմանը՝ տեղեկատվական ասիմետրիայի, կոնտրագենտների օպորտունիստական վարքագծի և անորոշության պայմաններում:
7. Կախված իրականացվող դերից և գործառնական նշանակությունից՝ գործարքային հատվածը կարելի է տարանջատել հետևյալ ենթահատվածների՝
 - հասարակական, որն օժտված է օրինաստեղծ, իրավապաշտպան և դատական գործառույթներով,
 - շուկայական, որը հիմնված է սեփականության իրավունքի փոխանցման վրա և որին դասվում են փոխանակման մասնակիցները, որոնք ստիպված են գործել սահմանված նորմատիվ-իրավական ակտերի շրջանակների սահմաններում:
8. ՀՀ տնտեսության գործարքային հատվածը կարելի է ներկայացնել հետևյալ եռամակարդակ կառուցվածքով՝
 - միկրոմակարդակ՝ առանձին կամակերպության կամ գործարքային ճյուղի գործարքային ծախքերը,
 - մեզոմակարդակ՝ գործարքային շուկայական ենթահատվածի ըստ գործառնական նշանակության խոշորացված ոլորտներ՝ ֆինանսներ, առևտուր և ծառայություններ, տեղեկատվական և ինտելեկտուալ ոլորտներ,
 - մակրոմակարդակ, որը ներառում է գործարքային հատվածի մեզոմակարդակը և պետական գործարքային հատվածը:

Հաշվի առնելով վերոգրյալը, միանգամայն հիմնավորված ենք համարում, որպեսզի պետական վիճակագրական ծառայությունների կողմից հրապարակվող հաշվետվություններում արտադրության կառուցվածքում գործարքային ճյուղերը

ներկայացվեն ըստ դրանց մեզոմակարգակի, որն ավելի դյուրին կդարձնի գործարքային ծախսերի հաշվառումն ու խմբավորումն ըստ վերջիններիս գործառնական նշանակության, ինչպես նաև կապահովվի վերջիններիս համադրելիությունն ըստ առանձին երկրների:

9. Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ վերջին քսանհինգ տարիների ընթացքում աճել է շուրջ 22%-ով:

Գործարքային ծախքերի աճն առաջին հերթին պայմանավորված էր տնտեսության վերարտադրության համակարգի արմատական ձևափոխմամբ, որն ուղեկցվում էր բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների ի հայտ գալով, շուկայական փոխազդեցությունների վրա կատարվող ծախքերի աճով, փոխազդեցությունների նոր ձևերի որոնմամբ, վարքի համընդհանուր ընդունված ստանդարտների բացակայությամբ, ենթակառուցվածքային համակարգերի վրա աճող ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև շուկայական պայմաններին հարմարվելու անհրաժեշտությամբ:

10. ՀՀ տնտեսության և նրա առանձին հատվածների արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսության գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությունը վերջին հինգ տարիներին ավելի բարձ է եղել, քան ամբողջ տնտեսության և դրա բազային հատվածի արդյունավետությունը: Ընդ որում, բազային հատվածի արդյունավետությունը մոտ է ընդհանուր տնտեսության արդյունավետությանը՝ զիջելով վերջինիս ընդամենը 3.5%-ով, իսկ գործարքային հատվածին այն զիջում է շուրջ 17%-ով: Գործարքային հատվածի միջին արդյունավետությունը նշված տարիներին գերազանցել է տնտեսության միջին արդյունավետությունը՝ 12.4%-ով:

11. 2011-2015թթ. ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ կազմում հստակ աճի միտում է ունեցել և 2015թ. դրությամբ այդ աճը կազմել է 5%: Նշված ժամանակահատվածում գործարքային հատվածի մասնաբաժինը ՀՆԱ-ում միջին հաշվով կազմել է 28.2%, ինչը 1.8%-ով գերազանցում է համախառն թողարկման մեջ գործարքային հատվածի տեսակարար կշռի միջին ցուցանիշին:

12. Վրաստանում, ինչպես և Հայաստանում տնտեսության գործարքային հատվածի արդյունավետությունը դիտարկվող ժամանակահատվածում ավելի բարձր է, քան տնտեսության և վերջինիս բազային հատվածի արդյունավետությունը: Ընդ որում, ՀՀ-ում գործարքային հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ կազմում առավել քան 10 տոկոսային կետով զիջում է Վրաստանի նույն ցուցանիշին, սակայն Վրաստանի գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությունը զիջում է Հայաստանի գործարքային հատվածի հարաբերական արդյունավետությանը 5-6%-ով (2012-2015թ), ինչի հետևանքով, չնայած ՀՆԱ-ում գործարքային ծախսերի զգալիորեն բարձր տեսակակար կշռին, Վրաստանի բազային հատվածի հարաբերական արդյունավետությունը գտնվում է Հայաստանի բազային հատվածի հարաբերական արդյունավետության հետ համադրելի մակարդակի վրա:

13. Հայաստանի տնտեսության շուրջ քսանհինգամյա ձևափոխումները ցույց են տալիս, որ շուկայական մեխանիզմների ցածր արդյունավետության պատճառներից մեկը հանդիսանում է ինստիտուցիոնալ միջավայրի անկատարությունը: Վերջինս արտացոլող հիմնական առանձնահատկություններից կարելի է նշել սեփականության իրավունքի մասնակիացման և պաշտպանության հետ կապված բարձր ծախքերը, զգալի վարչական արգելքները և խոչընդոտները, օրենսդրական դաշտի հակասականությունը, պետական և կորպորատիվ կառավարման որակի ցածր մակարդակը, մրցակցության ոչ հավասար պայմանները, բարձր հարկային բեռը, ստվերային տնտեսության բարձր տեսակարար կշիռը,

ընդհանուր տնտեսական անորոշությունները: Բոլոր նշված գործոնները զգալիորեն մեծացնում են ձեռնարկատիրական ռիսկերը, նվազեցնում գործարար ակտիվությունը և Հայաստանի տնտեսության ներդրումային գրավչությունը: Այս առումով, հարկավոր է ակտիվացնել ինստիտուցիոնալ միջավայրի կատարելագործման ուղղությամբ պետական քաղաքականությունը և մշակել պետական գործարքային քաղաքականություն՝ հիմնված ներքոհիշյալ սկզբունքների վրա.

- ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացում պետության կողմից առանցքային դերակատարման և հստակ պատասխանատվության ստանձնում,՝
 - գործարար և ներդրումային միջավայրերի շարունակական բարելավում,
 - նորարարական տեխնոլոգիաների ներգրավվածության ընդլայնում,
 - տնտեսական հարաբերություններում հավասար մրցակցային պայմանների ապահովում,
 - ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների մերձեցում ու փոխգործակցություն,
 - հանրային կառույցների դերակատարման բարձրացում:
14. Լուրջ անելիքներ կան պետական կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է՝
- կատարելագործել պետական կառավարման ոլորտում վարչարարությունը,
 - կրճատել պետական ապարատի պահպանման ծախսերը,
 - պետական հսկողական գործառույթներին զուգահեռ ապահովել շուկայի մասնակիցներին և ազգաբնակչությանը որակյալ, մրցունակ և մասնավոր ծառայություններին համադրելի որակով պետական ծառայությունների մատուցումը,
 - հստակեցնել և օպտիմալացնել պետական կառավարման մարմինների գործառույթները, վերջիններիս շրջանակում մասնագիտական, սպասարկման և այլ ծառայությունների մի մասը պատվիրակել մասնավոր հատվածի ընկերություններին,
 - պարզեցնել տնտեսվարողների կողմից ներկայացվող հաշվետվությունները և ապահովել դրանց միասնականությունը,
 - արագացնել կենսաչափական կողմնորոշիչ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրումը, որը կոյուրացնի բոլոր քաղաքացիների համար հանրապետության ողջ տարածքում էլեկտրոնային ծառայություններից օգտվելը,
15. Իրականացնել հանրային ռեգիստրների հետագա բարեփոխումներ՝ որպես անձանց գույքային իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ՝ ապահովելով միասնական սպասարկման կենտրոնների մատչելի ծառայությունների մատուցումը:
16. Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության և գործարքային ծախսերի կրճատման ապահովման համար առաջնային պայման է հանդիսանում մրցակցության միջոցով տնտեսական և իրավական հավասար պայմանների ստեղծումը տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար: Մեր հանրապետությունում ստվերային տնտեսության առկայությունը անհավասար տնտեսական և մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսության պաշտոնական և ոչ պաշտոնական հատվածներում գործող ձեռնարկությունների միջև: Ներկայումս ստվերային տնտեսության աճը վտանգում է շուկայական հարաբերությունների հիմքում դրված ամենակարևոր սկզբունքը՝ ազատ մրցակցությունը, ինչպես նաև կանխում հասարակության սոցիալական և գիտատեխնիկական առաջընթացը: ՀՀ-ում ստվերային գործունեության առաջացման և տնտեսության մեջ դրա բարձր մակարդակի միակ պատճառը հանդիսանում է տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի անկատարությունը, պետական հարկային քաղաքականության բացթողումները, կառավարման մարմիններում առկա կոռուպցիոն

երևույթները, որոնք հանգեցնում են տնտեսության մեջ գործարքային ծախքերի անհավասարաչափ բաշխման և տնտեսության արդյունավետության նվազման: Տնտեսության մեջ ստվերի և կոռուպցիայի կրճատման ուղղությամբ կարծում ենք անհրաժեշտ է՝

- վերացնել այն գործառույթները, որոնք բիզնեսի և քաղաքացիների համար ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ, ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը՝ կանոնների ու ընթացակարգերի սահմանման առումով՝ նվազագույնի հասցնելով միջամտությունը տնտեսական հարաբերություններին,
 - բացառել պետական կառավարման ոլորտում պաշտոնատար անձանց սեփական բիզնես շահերը,
 - նվազեցնել կանխիկ գործարքների համար սահմանաված առավելագույն շեմը՝ նպաստելով տնտեսության մեջ ստվերային շրջանառության ծավալի կրճատմանը,
 - ապահովել պետական ինստիտուտների նկատմամբ հանրության վստահության բարձրացումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և պատասխանատվության պատշաճ մակարդակի ապահովմամբ,
 - խստացնել պետական կառավարման համակարգում պաշտոնյաների արհեստավարժության նկատմամբ մասնագիտական պահանջները և որակյալ մասնագետների ներգրավման հստակ մեխանիզմների ստեղծել,
 - ապահովել հանրությանը մատուցվող արդարադատության ոլորտի ծառայությունների առավել մատչելիությունը, ընդլայնել սպասարկման կենտրոնների ցանցը և արդարադատության ոլորտի ծառայությունների գերակշիռ մասը մատուցել առցանց եղանակով,
 - կատարելագործել գործող օրենսդրությունը, բացառելով վերջինիս մեջ կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթները:
17. Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորումը առանցքային դերակատում կունենա գործարքային ծախքերի կրճատման ուղղությամբ: Մասնավորապես, դա կարող է ապահովվել արդյունավետ և թափանցիկ իրավական համակարգի ապահովմամբ, արդյունավետ ենթակառուցվածքների և բարձրորակ կրթական ու առողջապահական համակարգի ձևավորմամբ: Ներդրումների միջավայրի բարելավման ոլորտում նպատակաուղղված ներքոհիշյալ միջոցառումները ևս կնպաստեն գործարքային ծախքերի կրճատմանը, մասնավորապես.
- ներդրումային գործունեության տեղեկատվական ապահովման ուղղությամբ պետական աջակցության ցուցաբերում գործող և նոր ստեղծվող խորհրդատվական ընկերություններին, բիզնես-պլանների մշակման և նախագծերի իրականացման ոլորտում:
 - շուկաների հասանելիություն ապահովելու համար գործող և սկսնակ ձեռնարկություններին ուղղորդում և աջակցություն, ինչպես նաև իրավական, հարկային և այլ ոլորտներին և հիմնահարցերին առնչվող խորհրդատվության տրամադրում,
 - անկախ արբիտրաժների գործունեության ինստիտուտի ներդրում և զարգացում՝ տնտեսական վեճերի արագ և մատչելի լուծման համատեքստում,
 - առևտրա-արդյունաբերական պալատի գործունեության արդյունավետության բարձրացում,
 - ներդրումների աջակցության նպատակով պետական օժանդակություն ստանալու համար դիմումների ներկայացման և քննարկման ժամկետների նվազեցում,
 - դիմումների քննարկումների և որոշումների կայացման թափանցիկության ապահովում,
 - հարկային խթանների լայն կիրառում,

- արտոնյալ վարկերի կիրառում, գործող և սկսնակ ձեռնարկություններին, ինչպես նաև վարկային երաշխավորությունների տրամադրում,
- շուկայի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական բազայի ձևավորում,
- մարքեթինգային աջակցող միջոցառումների կազմակերպում,
- գործարար հմտությունների զարգացում և այլն:

18. ՀՀ տնտեսության մեջ գործարքային ծախքերի նվազեցմանը կնպաստի նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Վերջինս կայանում է տեղեկատվական տեխնոլոգիաների փուլային ռազմավարությունների կիրառման և տեղեկատվական-առևտրային համակարգերի ձևավորման մեջ, որոնք նախատեսում են գործարքային ծախքերի ռացիոնալացում, նոր էլեկտրոնային հաղորդակցությունների զարգացում, ինչը կհանգեցնի գործարքային ծախքերի կրճատման և որպես վերջինիս հետևանք՝ գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական ինստիտուտների տրանսֆորմացիայի, ինչպես նաև բենչմարքինգի գործիքակազմի լայն կիրառում, որոնք կիրառվում են գործարքային ծախքերի կրճատման ոչ ինստիտուցիոնալ մեթոդներում: Տվյալ դեպքում խոսքը գնում է գործարքային ծախքերի կրճատման այլընտրանքային մոտեցման մասին, երբ գործարքային ծախքերը նվազեցվում են առանց սոցիալական որևէ ինստիտուտի ձևավորման: Կառավարման համակարգի և բիզնես-գործընթացների ավտոմատացման ոլորտում համապատասխան լուծումները թույլ են տալիս կրճատել կառավարչական որոշումների նախապտրաստման ժամանակը և կրճատել մեկ գործարքի հաշվով գործարքային ծախքերը:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Վերոյան Ռ. Տնտեսության գործարքային ծախսերի գնահատման առանձնահատկությունները //Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու – 2016), ՀՀ ԳԱԱ. Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, էջ 332-338
2. Վերոյան Ռ. Գործարքային ծախսերի էությունը և տնտեսագիտական մեկնաբանությունը //Կաճառ գիտական տարեգիրք, 2016, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, էջ 300 – 303
3. Վերոյան Ռ. Տնտեսության գործարքային հատվածի կառուցվածքը և դինամիկան ՀՀ-ում //Կաճառ գիտական տարեգիրք, 2017, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, էջ 146-153
4. Վերոյան Ռ. Գործարքային ծախքերի նվազեցման ուղիները ՀՀ տնտեսությունում//Ֆինանսներ և Էկոնոմիկա հանդես, 2017, թիվ 3-4 /199-200/, էջ 106-109

ВЕРДЯН РАДИК АРТЕМОВИЧ

“ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ И СОКРАЩЕНИЯ ТРАНСАКЦИОННЫХ ИЗДЕРЖЕК В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ”

Автореферат диссертации на соискание ученой степени доктора наук по специальности 08.00.02-„Экономика, управление хозяйством и его областями,,.

Защита диссертации состоится на заседании специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения при экономическом факультете Ереванского государственного университета 4-ого июля 2017 года в 15⁰⁰, по адресу: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В условиях рыночной экономики основной задачей развития экономики Армении является обеспечение стабильного и интенсивного экономического роста, в которой важную роль играют совершенствование институциональной структуры экономики и сокращение транзакционных издержек. Текущий этап развития экономики Армении отличается неполноценностью основ институциональных взаимоотношений, при которых экономические субъекты действуют в условиях недоразвитости институтов договорных отношений.

Цели и задачи исследования. Основной целью исследования является оценка транзакционных издержек в экономике Республики Армения, а также разработка механизмов и путей их сокращения, для достижения которой в диссертации поставлены и решены следующие задачи:

- Изучить понятие и сущность транзакционных издержек, выявить роль последних в экономике;
- Исследовать теоретико - методологические основы транзакционных издержек;
- Изучить основные подходы к экономической классификации транзакционных издержек;
- Проанализировать основные подходы к экономической оценке транзакционных издержек и их особенности;
- Изучить международный опыт оценки транзакционных издержек и проанализировать ее основные особенности;
- Изучить и проанализировать концептуальные подходы к управлению транзакционных издержек;
- Представить основные подходы к структуре транзакционного сегмента экономики Республики Армения;
- Оценить уровень транзакционных издержек в экономике РА, а также относительную эффективность транзакционного сегмента и его отдельных отраслей;
- Выявить проблемы сокращения транзакционных издержек в Республике Армения и разработать предположения по их решению.

Объект и предмет исследования. Объектом исследования является экономика Республики Армения, а предметом транзакционные издержки экономики и пути их снижения.

Научная новизна диссертации. Научные результаты диссертации, которые обусловлены решением поставленных задач, является следующими:

- На основе анализа экономических основ и подходов к классификации транзакционных издержек было выработано трех-уровневное определение транзакционных издержек, на основе чего была сделана рекомендация государственным статистическим службам по подготовке соответствующей статистики, что поспособствует представлению транзакционных издержек в естественном и сопоставимом между разными странами виде.
- На основе анализа структуры и особенностей транзакционного сегмента экономики РА оценен удельный вес транзакционных издержек в составе валового выпуска и ВВП, а также рассчитана относительная эффективность экономики РА и его базового и транзакционного сегментов. На основе анализа институциональных особенностей экономики РА представлены предложения по сокращению транзакционных издержек.
- В результате анализа особенностей экономики РА и его институциональной структуры представлены новые подходы к структуре транзакционного сегмента экономики РА;
- С целью урегулирования транзакционного сегмента экономики РА обосновано формирование государственной транзакционной политики, а также предложены основные принципы и пути ее реализации;

Исследования структуры, свойств и проблем транзакционных издержек в экономике РА, а также предложения по усовершенствованию институциональных реформ, могут быть использованы законодательными и исполнительными органами РА в целях регулирования институциональной среды, сокращения транзакционных издержек, повышения эффективности экономики, а также разработки и реализации комплекса мероприятий по усовершенствованию институциональной среды.

По теме диссертации опубликовано 4 научных статьи.

RADIK ARTYOM VERDYAN

“ASSESSMENT AND REDUCTION ISSUES OF TRANSACTION COSTS IN THE REPUBLIC OF ARMENIA”

The abstract of the dissertation for pursuing the degree of PhD in specialty 08.00.02–“Economics and Management of Economy and its Spheres”.

The defense of the dissertation will take place at 15⁰⁰, on July 4th, 2013, at the meeting of the specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, located at 52, Abovyan St., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

Inside competitive markets sustainable and intensive economic growth is the main challenge of the development of the economy of Armenia, in which improvement of institutional structure and reduction of transaction costs plays a key role. Current stage of the economic development of Armenia is distinctive by unfinished foundations for institutional interactions, under which economic entities operate within underdeveloped institutes of contractual relationships.

Research objective and tasks: The main objective of the research is the assessment of transaction costs in the economy of the Republic of Armenia and the development of mitigation mechanisms and ways of the latter.

- The following tasks have been set and solved to achieve the above-mentioned objective:
- To explore the transaction costs concept and the nature and to reveal the role of the latter in economy,
- To study the theoretical-methodological basis of transaction costs,
- To examine the main approaches of the economic classification of transaction costs,
- To analyze the main approaches of the transaction costs assessment in economy and their characteristic features,
- To investigate and analyze the international experience on transaction costs for the assessment of its main characteristic features,
- To explore and analyze the management conceptual approaches of transaction costs,
- To present the basic approaches regarding the structure of the transaction sector of the RA economy,
- To assess the transaction cost level in the RA economy and the relative effectiveness of the transaction sector and its separate branches, as well,
- To identify the reduction issues on transaction costs in the Republic of Armenia and develop recommendations to solve them,

Research Object and Subject: The object of the given research is Armenia's economy, and the subject – the transaction costs existing in economy.

Thesis Scientific Innovation: The scientific findings of the thesis connected with solving of the set tasks are follow:

- Based on the analysis of the economic foundations and classification approaches of transaction costs a three-layer definition of transactions costs has been developed. A

recommendation has been made to state statistical services to present data in accordance with this definition, which will enable genuine and comparable representation of transaction costs across different countries.

- Based on the analysis of the structure and characteristic features of the operational sector of the RA economy, the share of transaction costs has been evaluated in gross output and GDP. In addition, the relative effectiveness of the RA economy and of its basic and operational sectors has been calculated. Based on the identification of institutional features of the RA economy, recommendations aimed at reducing the transaction costs have been proposed.

- Based on the evaluation of the transaction costs level in the structure of the RA economy, -As a result of the analysis of peculiarities of the RA economy and the institutional structure, new approaches have been recommended regarding the structure of the operational sector of economy.

-To regulate the operational sector of the RA economy, the formation of the state transaction policy was justified, as well as the basic principles and approaches regarding the implementation of the latter have been proposed.

Analysis of the structure, properties and problems of transactions costs in the economy of the Republic of Armenia and recommendations on improvement of institutional reforms can be used by legislative and executive bodies in regulation of institutional environment, reduction of transactions costs, increasing effectiveness of the economy as well as development and implementation of a set of measures for improvement of the institutional environment.

The main content of the dissertation is reflected in 4 published scientific articles.

